Հավելված N 6
ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու
2025 թվականի մարտի 24-ի
N 58-Ա որոշման

**ՍԽԵՄԱ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ**

1. Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվում են անհրաժեշտ քանակի հատուկ աղբատար և հարմարեցված (որոնք շահագործվում են սահմանված կարգով աղբահանության կազմակերպման նպատակների համար) ինքնաթափ ավտոտրանսպորտային միջոցներով:
2. Յուրաքանչյուր երթուղին ընդգրկում է սկզբնակետ և վերջնակետ՝ (ավտոհավաքակայան) և ուղեգիծը (թաղամաս և դեպի աղբավայր):
3. Աղբի հավաքումը և փոխադրումը աղբարկղերից իրականացվում է ժամանակացույցի:
4. Սանիտարական մաքրման աշխատանքները կատարվում են ըստ ժամանակացույցի:
5. Համայնքի հուշարձանների սանիտարական մաքրումն ըստ ամիսների իրականացվում է՝ ըստ հասցեների և ժամանակացույցի:
7. Համայնքի սանիտարական մաքրումն իրականացվում է հրապարակներում, բոլոր կենտրոնական և միջթաղային փողոցներում, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 159680 քառակուսի մետր:
8. Յուրաքանչյուր օր Համայնքում հավաքվում և աղբավայր է տեղափոխվում մոտ 189 խորանարդ մետր աղբ:
9. Կանաչապատ գոտիների խնամք է իրականացվում 4 հեկտար տարածքի վրա:
10. Յուրաքանչյուր օր համայնքի տարածքից հավաքվում և աղբավայր է տեղափոխվում մոտ 5 տոննա ավլվածք և թափոններ: Աղբավայր տեղափոխված աղբակույտերը պարբերաբար տեղում հարթեցվում են: